ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 10 >> Մարտի 2020թ. N ՄՊ/73-2020

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՑ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի փետրվարի 1-ի N 01-Լ հրամանը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից աշակերտական խորհրդի կազմում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցներից աշակերտների ընտրության աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Արմավիրի N 4 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտական կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Լիլիթ Եփրեմյանին (համաձայնությամբ), «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Նաիրա Առաքելյանին (համաձայնությամբ) «Երիտասարդական ավանգարդ» հանրային շահերի աջակցման հասարակական կազմակերպության նախագահ Սուսաննա Մատինյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Invalid signature

VERIFIED OCSP 3/10/2020 16:00:25 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետի 2020 թվականի մարտի <<10>>-ի

N 22/73-2020 որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ

Ն. Սարգսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ:

Անդամներ

Ա. Խլղաթյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ:

Գ. Մուրադյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Վ.ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Недействительная подпись

VERIFIED OCSP 10.03.2020 15:58:04 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217